Հավելված 1Ե
**Ծրագրային ամփոփ հաշվետվությունն**

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի
Տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանին

Հաստատություն՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Դրամաշնորհային ծրագրի անվանում՝ «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով»

Դրամաշնորհային ծրագրի իրականացման ժամանակաշրջան՝ 23.12.2016-30.11.2019

Դրամաշնորհային պայմանագրի համար՝ 8/16-CIF

| N | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծրագրված գործողություններ | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծրագրված գործողությունների իրականացմանն ուղղված քայլեր | Դրամաշնորհային ծրագրի արդյունքներ | Դրամաշնորհային ծրագրի արդյունքների տարածման և շարունակականության ապահովման ուղղությամբ նախատեսվող գործողություններ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Նյութատեխնիկապես վերազինված, համակարգչային սարքավորումներով ապահովված, իրար կապակցված ու գործարկված մուլտիմեդիոն լաբորատորիա և երկու հետազոտական լսարաններ: | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ-ի Սկզբնական կրթության ֆակուլտետի կազմում ստեղծվել են մուլտիմեդիոն լաբորատորիա և երկու հետազոտական լսարաններ: Մասնավորապես, ծրագրի մեկնարկից հետո առանձնացվել են մուլտիմեդիոն լաբորատորիայի և երկու հետազոտական լսարանների համար նախատեսված տարածքները, իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, լաբորատորիան և լսարանները կահավորվել են, տեղադրվել են օդորակիչներ, համալրվել են համակարգչային և հարակից այլ սարքերով (համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ, ինտերակտիվ թաչ դիսփլեյներ, փաստաթղթերի տեսավիզուալացնող սարք, տպող սարք, տեսաձայնարկիչ և այլն): Միաժամանակ, | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված, գործարկված և շահագործման հանձնված թվով երկու հետազոտական լսարաններ և մեկ մուլտիմեդիոն լաբորատորիա՝ հագեցած համապատասխանաբար անհրաժեշտ գույքով, տեսակապի հնարավորությամբ և անհրաժեշտ մեթոդական նյութ-գրականությամբ ու նյութատեխնիկական և համակարգչային միջոցներով: ՀՊՄՀ-ում գործող «Մուլտիմեդիա գիտահետազոտական լաբորատորիա»՝ համապատասխան կանոնակարգով և աշխատանքային հայեցակարգով: | Ծրագրի շարունակականությունն ապահովելու համա ավարտից հետ պարբերաբար նախատեսվու է համալսարանում ստեղծվա կենտրոնի վերաբերյա հանրային իրազեկվածությա մակարդակի բարձրացու իրականացնելով լուսաբանմա աշխատանքներ համալսարանի պաշտոնակա կայքի և աշխատանքայի հանդիպումների ո քննարկումների միջոցո Միաժամանակ, ծրագր շարունակականության ապահովման տեսանկյունի հարկ է նշել, որ արդեն իս Սկզբնական կրթությա ֆակուլտետի բակալավրիատ և մագիստրատուրայ համապատասխան կուրսեր ուսանողները լսարաններում մուլտիմեդիոն լաբորատորիայում իրականացնում են իրենց ուսումնական հետազոտական աշխատանքները: Բացի այդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | իրականացվել է լաբորատորիայի և հետազոտական լարանների փոխկապակցում: Բացի այդ, ծրագրի շրջանակներում մշակվել է մուլտիմեդիոն լաբորատորիայի աշխատանքային հայեցակարգը և կանոնակարգը, որը հաստատվել է ՀՊՄՀ-ի՝ 2018 թ. դեկտեմբերի 27-ին կայացած գիտական խորհրդի նիստում: Ներկայումս լաբորատորիան գործում է հաստատված կանոնակարգին համապատասխան: | | բուհի վերոնշյալ ֆակուլտետ համապատասխան մասնագիտական կրթակա ծրագրերում, լաբորատորիայ ընձեռած հնարավորություններով պայմանավորված, կատարվե և պարբերաբա իրականացվելու ե անհրաժեշտ վերափոխումներ: Նախատեսվում է նա իրականացնել հետազոտակա լաբորատորիայի պաշտոնական բացու տարբեր ԶԼՄ-ներ լուսաբանմամբ: |
| 2. | Կրթական էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման համար համակարգչային ծրագրի ձեռքբերում, էլեկտրոնային կրթական հարթակի և էլեկտրոնային գրադարանի ու ուսումնաօժանդակ նյութերի ստեղծում: | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և տեղադրվել Adobe Creative Cloud ծրագրային փաթեթը, որի միջոցով դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համապատասխան մասնագետների կողմից կազմակերպվել են ծրագրային փաթեթի և դրա բաղադրիչների կիրառման ուղղությամբ | Կրթական էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման համար Adobe Creative Cloud ծրագրային փաթեթի առկայություն (36 ամիս արտոնագրային ժամկետով): Ստեղծված, գործարկված, ներդրված, ուսումնաօժանդակ նյութերով, էլեկտրոնային գրքերով զետեղված էլեկտրոնային կրթական հարթակ և էլեկտրոնային | Adobe Creative Clou ծրագրային փաթեթի՝ 36 ամի արտոնագրային ժամկետ ավարտից հետո, բուհի կողմի նախատեսվում է վերջինի երկարացում: Դրամաշնորհային ծրագր արդյունքների տարածմա համար նախատեսվում հաջորդ երկու տարիների Սկզբնական կրթությա ֆակուլտետում կազմակերպե |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վերապատրաստումներ, որի արդյունքում մուլտիմեդիոն լաբորատորիայի շահակիցների կողմից ստեղծվել են ուսումնաօժանդակ ռեսուրսներ (ձայնային, անիմացիոն, պատկերային)՝ մոտ 3000 օրինակ: Մշակված ուսումնաօժանդակ նյութերը տեղադրվել են էլեկտրոնային կրթական հարթակում: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում որակավորման հիման վրա ընտրված կազմակերպության՝ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է էլեկտրոնային կրթական հարթակի, էլեկտրոնային գրադարանի մշակում, ներդրում և գործարկում: Միաժամանակ, կազմակերպության կողմից բուհի համապատասխան մասնագետներին տրամադրվել է խորհրդատվություն՝ հարթակի հնարավորությունների և դրանց կիրառման ուղղությամբ: Ներկայումս | գրադարան: | ինչպես ապագա դիմորդներ մասնագիտական կողմնորոշման հանդիպու քննարկումներ՝ շեշտադրելո ուսումնական գործընթացու էլեկտրոնային կրթակա հարթակի և էլեկտրոնայի կրթական գրադարան ընձեռած հնարավորությունները, այնպես էլ դասախոսների հանրակրթական դպրոց ուսուցիչների պարբերաբա վերապատրաստումներ՝ դասապրոցեսում հարթակ կիրառման ուղղությամբ Վերջին ծրագրի նախագիծ արդեն իսկ քննարկմա փուլում է: Միևնույն ժամանա Սկզբնական կրթությա ֆակուլտետի մի շար ուսանողներ իրեն ավարտական աշխատանքների մագիստրոսական թեզեր շարադրման շրջանակներու մուլտիմեդիա լաբորատորիայում իրականացնում ե |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հարթակը ներդրված և գործարկված է, ինչպես նաև համալրված է էլեկտրոնային գրքերով և ուսումնաօժանդակ նյութերով: Ընդ որում, հարթակից օգտվում են ինչպես ուսանողները՝ իրենց մասնագիտական պրակտիկայի և դասընթացների ընթացքում, այնպես էլ դասախոսներն ու այլ շահառուներ:<br>Միաժամանակ նշենք, որ Ինֆորմատիկայի և դրա դասավանդման ամբիոնի կողմից՝ աջակցելով Սկզբնական կրթության ֆակուլտետին, իրականացվել է ուսանողների ՏՀՏ գիտելիքների և հմտությունների գնահատում՝ հարթակը կիրառելու և ուսանողների ՏՀՏ գիտելիքներն ու հմտությունները վերլուծելու նպատակով: Հավելենք նաև, որ ստացված վերլուծությունների հիման վրա իրականացվել են շահառուների | | հետազոտական աշխատանքներ՝ օգտվելո կրթական հարթակի ընձեռա հնարավորություններից: Բաց այդ, նախատեսվում է նա էլեկտրոնային կրթակա հարթակի և էլեկտրոնայի գրադարանի պարբերաբար անընդհատ թարմացում համալրում ուսումնաօժանդա նյութերով: Դրամաշնորհայի ծրագրի արդյունքներ տարածման համա նախատեսվում է մինչև 202 թ. ավարտը Սկզբնակա կրթության ֆակուլտետի հե համագործակցող բոլո դպրոցները, մանկապարտեզները, ինչպե նաև բուհերը ներառե համակարգում: Այսօր արդե իրականացվել ե վերապատրաստումներ Երևանի թիվ 57, 124, 125, 13 դպրոցների, Էջմիածն Էօրնեկեան հիմնակա դպրոցի, Գլոբալ Բրի կրթահամալիրի, Գավառ պետական համալսարանի թիվ 26, 5 մանկապարտեզի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վերապատրաստումներ, որից հետո կրկին իրականացվել է համապատասխան գիտելիքների ու հմտությունների գնահատում: | | ինչպես նաև Գիտունիկնե նախադպրոցական հիմնարկ անձնակազմների հետ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև ՀՀ հեռավոր մարզեր դպրոցներին, որոն տրամադրվելու է հարթակի օգտվելու հասանելիություն ինչպես նաև կազմակերպվել են տեսակոնֆերանսներ վարպետության և փորձ փոխանակման դասեր: |
| 3. | Նախադպրոցական և տարրական մասնագիտությունների կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչների վերանայում և բարելավում, ուսումնաօժանդակ նյութերի մանկավարժական և գիտամեթոդական նախագծում,փորձարկում, վերանայում և զետեղում հարթակում: | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ընտրված երեք անհատ խորհրդատուները իրականացրել են Սկզբնական կրթության ֆակուլտետի նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ու տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություններով բակալավրական և մագիստրոսական ծրագրերի վերանայման աշխատանքներ: Վերանայված և բարելավված ծրագրերը հաստատվել են | Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստով հաստատված Սկզբնական կրթության ֆակուլտետի նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա ու տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտություններով բակալավրիատի և մագիստրատուրայի վերանայված, բարելավված և ներդրված չորս ծրագրեր, ինչպես նաև համապատասխանաբար վերանայված առարկայական | Դրամաշնորհային ծրագր ավարտից հետո, հաշվ առնելով մի շարք գործոններ մշակված կրթական ծրագրեր և ուսումնաօժանդակ նյութեր ու առաջադրանքներ պարբերաբար կկատարելագործվեն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Սկզբնական կրթության ֆակուլտետի՝ 2018 թ. հոկտեմբերի 1-ին կայացած խորհրդի նիստում: Վերանայված կրթական ծրագրերին համապատասխան որոշակի փոփոխություններ են կատարվել համապատասխան առարկայական նկարագրերում, իսկ վերանայված ՏՀՏ դասընթացի ծրագիրը ամբողջությամբ կներդրվի 2020-2021 ուս. տարում: 2019-2020 ուս. տարում արդեն իսկ ներդրվել է նոր դասընթաց «Կրթական հարթակների գործածումը բնագրային աշխատանքների ընթացքում»՝ Տարրական կրթության ֆակուլտետի չորրորդ կուրսի երկրորդ կիսամյակում: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ուսումնաօժանդակ նյութերի մանկավարժական և գիտամեթոդական նախագծման, փորձարկման, վերանայման և հարթակում զետեղման նպատակով | նկարագրեր: Սա իր հերթին ապահովում է ծրագրի հետագա շարունակականությունը: Չորս ուղղություններով մշակված, փորձարկված (ՀՀ մի քանի դպրոցներում) ուսումնաօժանդակ նյութեր: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ընտրված անհատ խորհրդատուները չորս ուղղություններով (նախադպրոցական ոլորտի միջին, ավագ խմբերի, տարրական դասարանների երեխաների համար մայրենի լեզվի և մաթեմատիկայի ուսումնառության համար ուսումնաօժանդակ նյութերի նախագծում և փորձարկում) իրականացրել են ուսումնաօժանդակ նյութերի մշակում և զետեղում էլեկտրոնային կրթական հարթակում: Բացի այդ, դրամաշնորհային ծրագրի շրջանակներում անհատ խորհրդատուի կողմից իրականացվել է նաև ուսումնաօժանդակ նյութերի մանկավարժական և գիտամեթոդական նախագծում՝ համապատասխան գրականության ընտրություն և ցանկի պատրաստում ու զետեղում էլեկտրոնային կրթական հարթակում: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում վերապատրաստումների անցկացում | - Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում բուհի չորս մասնագետներ գործուղվել և վերապատրաստվել են Ֆինլանդիայի Օուլուի համալսարանում՝ ուսումնասիրելով վաղ մանկության և տարրական կրթության ֆակուլտետների կառուցվածքը, կրթական ծրագրի և հետազոտական բաղադրիչի առանձնահատկությունները, ինչպես նաև Օուլուի համալսարանի կրթության ֆակուլտետում նորագույն տեխնոլոգիայի մեթոդական կիրառությունները:<br>Բացի այդ, բուհի միջոցների հաշվին երկու մասնագետ վերապատրաստումներ են անցել ՏՀՏ ոլորտում՝ Շվեդիայի Թագավորական համալսարանում և Միացյալ Թագավորության Կիլի համալսարանում: Նրանք ծանոթացել են նաև հետազոտական և մեթոդական միջազգայնացված մոտեցումներին, կատարել են | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում արտերկրում վերապատրաստված բուհի չորս մասնագետներ, նրանց կողմից սեմինարների և քննարկումերի միջոցով իրազեկված, վերապատրաստված աշխատակազմ:<br>ՏՀՏ և հետազոտական կարողությունների զարգացման առումով վերապատրաստված առնվազն տաս մասնագետ՝ յուրաքանչյուր ուղղությամբ:<br>Վերապատրաստված մասնակիցների կողմից մշակված մոտ 3000 էլեկտրոնային ռեսուրս: | Դրամաշնորհային ծրագր շարունակականության ապահովման տեսանկյունի հարկ է նշել, որ պարբերաբա համապատասխան անձնակազմի կողմի իրականացվելու են ՏՀՏ հետազոտական բաղադրիչ ուղղությամբ շարունակակա վերապատրաստումներ՝ ներգրավելով առավել մե թվով շահակիցների: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ուսումնասիրություններ՝ դրանք հետագայում ՀՊՄՀ-ում կիրառելու նպատակով: Արտերկրում վերապատրաստված մասնագետները բուհում կազմակերպել են սեմինարներ և մասնակիցներին են ներկայացրել Ֆինլանդիայի Օուլուի համալսարան գործուղման ընթացքում ձեռք բերած իրենց գիտելիքները, փորձն ու ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև առանձնացվել և քննարկվել են այն մոտեցումները, որոնց կիրառումը ՀՊՄՀ-ում իրատեսական է:<br>- Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՏՀՏ և հետազոտական կարողությունների զարգացման նպատակով ընտրվել են համապատասխան մասնագետներ, ովքեր մշակել են վերապատրաստման մոդուլներ և իրականացրել են վերապատրաստումներ: ՏՀՏ ուղղությամբ իրականացվել են վերապատրաստումներ՝ Adobe | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Creative Cloud ծրագրային փաթեթի 3 հիմնական բաղադրիչների և Տ<Տ մեթոդաբանության ուղղությամբ: Բացի այդ, դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ընտրված մասնագետները իրականացրել են քանակական և որակական հետազոտական բաղադրիչների ուղղությամբ վերապատրաստումներ: Դրանք ուղղված էին որակական և քանակական հետազոտական հմտությունների և կարողությունների զարգացմանը, որն էլ կնպաստի կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքների մեթոդաբանության հստակ ձևակերպմանը, հետազոտական խնդիրների ներկայացմանը, տվյալների հավաքագրման մեթոդների տեսակների ճիշտ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ընտրությանը և այլն: Միաժամանակ, նշենք, որ վերապատրաստումների ընթացքում մասնակիցների կողմից մշակվել են էլեկտրոնային ռեսուրսներ, որոնք տեղադրվել են էլեկտրոնային կրթական հարթակում: | | |
| 5. | Գիտահետազոտական կենտրոնի՝ մուլտիմեդիոն լաբորատորիայի մասնագիտական զարգացման ծրագրում ինտեգրված վերապատրաստման ծրագիր | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ-ի Սկզբնական կրթության ֆակուլտետի կազմում ստեղծվել են մուլտիմեդիոն լաբորատորիա և երկու հետազոտական լսարաններ, որոնց հիմքի վրա համապատասխան մասնագետների կողմից արդեն իսկ աշխատանքներ են տարվում մշակել մասնագիտական զարգացման և շարունակական կրթության ապահովման վերապատրաստումների ծրագիր՝ համապատասխան տևողությամբ: Նախատեսվում է, որ 2020թ. հունվար-փետրվար ամիսներին արդեն իսկ կունենանք վերջնական | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված գիտահետազոտական կենտրոնի՝ մուլտիմեդիոն լաբորատորիայի մասնագիտական զարգացման նախնական վերապատրաստման ծրագիր, կրթական մոդուլներ և ժամանակացույց, որոնք ենթակա են հաստատման: | Ծրագրի շարունակականությունն ապահովելու համա ավարտից հետ պարբերաբար նախատեսվու է վերապատրաստման ծրագր նորացում, կատարելագործու ինչպես նաև պարբերաբա վերապատրաստումների իրականացում, որ արդյունքում կունենան վերապատրաստված ուսուցիչների թվաքանակի աճ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մշակված վերապատրաստման ծրագիր, որով վերապատրաստումներ կանցնեն գիտահետազոտական կենտրոնի շահառուները: | | |

Ծրագրի ղեկավար՝ Մ. Մելիք-Բախշյան

24.12.2019թ.